# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Զովունի բնակավայր 08.08.2025 թ.

2025 թվականի օգոստոսի 8-ին՝ ժամը 11:00-ին, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով և Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշմամբ սահմանված կարգով, Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Զովունի բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «Լուք» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված՝ Զովունի բնակավայրի 1-ին փողոցի 200 հողամաս հասցեում բազմաբնակարան բնակելի շենքերի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային 2-րդ լսումը:

Բացման խոսքով հանդես եկավ Նաիրի համայնքի ներկայացուցիչ Արմինե Բաղդյանը, այնուհետև խոսքը փոխանցեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Քրիստինե Հարությունյանին: Հարությունյանը նշեց, որ փորձաքննության գործընթացն իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված կարգով և ներկայացրեց փորձաքննության գործընթացը, նշեց, որ փորձաքննության գործընթացին մասնակցել են պետական կառավարման մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները և ՇՄՆ ստորաբաժանումները, խոսեց նախատեսվող գործունեության արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների և բնապահպանական ռիսկերի մասին: Նա նշեց, որ նախաձեռնողը ՇՄԱԳ-ում նախատեսել է մի շարք մեղմացուցիչ միջոցառումներ, որոնք հնարավորություն կտան մեղմելու և նվազեցնելու հնարավոր ազդեցությունները:

Հարությունյանը նշեց, որ Օրենքի պահանջով կազմակերպվել է հանրային 2-րդ լսում, որի նպատակն է ազդակիր բնակավայրին և այլ շահագրգիռ անձանց մասնակից դարձնել փորձաքննության գործընթացին և լսել նաև նրանց կարծիքները: Նա ներկաներին տեղեկացրեց, որ առաջարկություններ ունենալու դեպքում կարող են դրանք ներկայացնել բանավոր կամ ուղարկել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշտոնական էլեկտրոնային փոստին և խոսքը փոխանցեց նախաձեռնողի ներկայացուցիչներին:

Նախաձեռնողի բնապահպանական մասի պատասխանատու Մերի Վարդանյանը մանրամասն ներկայացրեց նախատեսվող գործունեության ընթացքում բնապահպանական ռիսկերի նվազեցմանն ուղղված նախատեսվող միջոցառումները՝ մթնոլորտային օդի, ջրային ռեսուրսների, հողի հետ կապված: Նա նշեց, որ բոլոր ազդեցությունների համար

մշակվել են համապատասխան մեղմացնող միջոցառումներ, օրինակ, պարբերաբար իրականացվելու է ջրցան, իրականացվելու են աղմուկի մակարդակը նվազեցնող միջոցառումներ և այլն:

Այնուհետև նախագծի ճարտարապետը ներկայացրեց նախատեսվող գործունեության վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ, աշխատանքների կազմակերպման միջոցառումները և շինարարության փուլում նախատեսվող աշխատանքները:

Նախաձեռնողի ներկայացուցիչների կողմից նախագծի վերաբերյալ տեղեկությունները ներկայացնելուց հետո Հարությունյանը նշեց, որ կան չպարզաբանված հարցեր և դրանք ներկայացնելուց հետո խոսքը կփոխանցի նաև ներկաներին իրենց հարցերը հնչեցնելու համար: Նա ներկայացրեց քաղաքաշինության կոմիտեի և Կոտայքի մարզպետարանի կարծիքները: Քաղաքաշինության կոմիտեի կողմից նշվել է, որ տվյալ տարածքում տարածական պլանավորման փաստաթղթերի հիման վրա հարկայնությունը կազմում է 7 հարկ, սակայն նախաձեռնողի կողմից ներկայացված փաստաթղթերում շենքերը նախատեսվել են 16 հարկանի: Կոտայքի մարզպետարանն առարկություններ է ներկայացրել նախատեսվող գործունեության վերաբերյալ, քանի որ տարածքում առկա են ջրամատակարարման և ջրահեռացման հետ կապված խնդիրներ և տարածքը ծանրաբեռնված է: Նախաձեռնողի ներկայացուցիչները նշեցին, որ գլխավոր հատակագծում առկա է եղել վրիպակ, բացի դա համայնքի կողմից նախագծման թույլտվությունն ստացել են մինչև գլխավոր հատակագիծը հաստատվելը: Նրանք նշեցին, որ դիմել են համապատասխան մարմիններին, տարածքի գոտևորումն ու հարկայնությունը փոփոխելու նպատակով և գործընթացն ընթացքի մեջ է: Ջրահեռացման հետ կապված նախաձեռնողները նշեցին, որ «Վեոլիա ջուր» ընկերության հետ կկնքվի պայմանագիր և ձեռք կբերեն տեխնիկական պայման, սակայն Հարությունյանը հարցրեց իսկ ինչ պետք է անեն, եթե «Վեոլիա ջուր» ընկերությունը մերժի տեխնիկական պայմանի տրամադրումը: Նախաձեռնողները հարցին ի պատասխան նշեցին, որ հնարավոր չի, որ մերժի: Հարությունյանը նշեց, որ կան անհամապատասխանություններ նաև նախագծի և հաշվետվության որոշ տվյալների միջև, օրինակ, ավտոկայանատեղիների թիվը տարբեր է:

Նախատեսվող գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվելուց հետո Հարությունյանը խոսքը փոխանցեց ներկաներին՝ իրենց առաջարկությունները, դիտողությունները ներկայացնելու և հուզող հարցերը հնչեցնելու համար:

Բնակիչներից մեկը նշեց, որ ինքը դեմ է, որ իր տան կողքին կառուցվի բարձրահարկ շենք, ինչպես նաև նշեց, որ տվյալ տարածքում չի թույլատրվում 7 հարկից բարձր շենք կառուցել: Նա նշեց, որ պետական վերահսկողության ծառայությունից ստացվել է գրություն նշված հարցի վերաբերյալ: Համայնքի ներկայացուցիչը նշեց, որ ՊՎԾ-ն պահանջել է պարզաբանում տվյալ հարցի վերաբերյալ: Հարությունյանը բնակչին տեղեկացրեց, որ իր բոլոր դիտողություններն ու առաջարկությունները կարող է ներկայացնել գրավոր

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշտոնական էլեկտրոնային փոստին ուղարկելով և եթե դրանք լինեն հիմնավոր, հաշվի կառնվեն փորձաքննության գործընթացում:

Մյուս բնակիչների կողմից հարցեր չհնչեցին և Հարությունյանը ամփոփելով հանրային լսումը՝ շնորհակալություն հայտնեց ներկաներին:

Հանրային լսմանը մասնակցում էին ազդակիր համայնքի բնակիչներ, Նաիրի համայնքի ներկայացուցիչներ, Զովունի բնակավայրի և նախաձեռնողի ներկայացուցիչները:

Հանրային լսման լուսանկարները կցվում են սույն արձանագրությանը:

**Վարող և քննարկումների պատասխանատու՝** **Ք. Հարությունյան**

**«Լուք» ՍՊԸ-ի տնօրեն՝** **Տ. Առաքելյան**